ՏԵՂԵԿԱՆՔ

Գործող օրենքի փոփոխվող հոդվածի վերաբերյալ

Հոդված 17. Պետական կազմակերպության գործադիր մարմնի լիազորությունները

Պետական կազմակերպության գործադիր մարմինը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս պետական կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ) օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է պետական կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

գ) տալիս է պետական կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում պետական կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

ե) պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի գանձապետարանում (այսուհետ՝ գանձապետարան) բացում է հաշիվներ (համայնքային կազմակերպության դեպքում՝ բանկում կամ գանձապետարանում).

զ) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

է) սահմանում է պետական կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը.

ը) հաստատում է պետական կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները, եթե սույն լիազորությունը վերապահված չէ կոլեգիալ կառավարման մարմնին.

թ) նշանակում է պետական կազմակերպության հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին, նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր, եթե սույն լիազորությունը վերապահված չէ կոլեգիալ կառավարման մարմնին.

ժ) օրենքով և պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժա) իրականացնում է օրենսդրությամբ չհակասող և պետական կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ÷.

ժբ) չի կարող աշխատանքի նշանակել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր), եթե նրանց աշխատանքը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:

(17-րդ հոդվածը խմբ. 14.12.17 ՀՕ-306-Ն)